

№ 01 (109) Հունվար/2018

ՍԵՓԱՆԱԿԵՐԸ

# ԱՌԱՋԻՏԻՎ-ԿԱՆ

իանդես՝ մտածող եւ ոչ անտարբեր մարդկանց համար



**Արցախը՝ սովորական մարդկանց  
աչքերով**

# АНАЛИТИКОН

Ежемесячный аналитический журнал  
*Для мыслящих и неравнодушных людей*

СТЕПАНАКЕРТ  
Январь  
2018

Арцах глазами обычных людей

# THE ANALYTICON

Analytical Monthly Journal  
**For those who think and care**

STEPANAKERT  
January, 2018

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
**ՄՏԱԾՈՂ ԵՎ ՈՉ ԱՆՏԱՐԲԵՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԱՍԱՐ**

#01 (109) հունվար, 2018

Գլխավոր խմբագիր՝ Գ. ԲԱՂՋԱՍԱՐՅԱՆ  
Թողարկու խմբագիր՝ Յ. ՂԱԶԱՐՅԱՆ

Դիմնադիր եւ հրատարակիչ՝  
«Ստեփանակերտի ճամուլի ակումբ» ՀԿ

Հասցե՝ 375000  
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ  
փ. Մարտունի 73

Հեռախոս՝ +37447 942693  
943810

e-mail: bgegam@gmail.com

Դամարի լուսանկարները՝ համացանցային բաց աղբյուրներից

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 4** Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. «Երկիրը՝ սովորական մարդկանց աչքերով»
- 6** Գայանե ԳԵՎՈՐԳՅԱՆ. «Խտեգրվե՞լ թէ՞ հեռանալ»
- 10** Զովիետա ԱՌՈՒՍԱՍՅԱՆ. «Սեր, ազատություն, արդարություն՝ երեք գլխավոր արժեքները...»
- 14** Ելիզավետա ՊՈՂՈՍՅԱՆ. «Իրականությունը՝ բվերով... և ինչպես կա»
- 17** Հասմիկ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ. «Քնած գեղեցկուհին»
- 20** Լարա ՍԵՎՈՒՏՅԱՆ. «Գյուղացին և հողը»
- 22** Նարինե ԱՂԱԼՅԱՆ. «Վասն հյուրանոցային բիզնեսի...»
- 24** Քրիստինե ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Ամելանելի իրավավիճակներ չկան»
- 26** Ուուզաննա ԱՎԱԳՅԱՆ. «Փախստականներ. երեկ, այսօր և վաղը»
- 29** Ալյոնա ՄԵԼՔՈՒՏՅԱՆ. «Ծոշակառուներն ել են ուստի ուզում»
- 31** Վարդիքեր ԱՌԱՍԱՍՅԱՆ. «Պատերազմի և խաղաղության միջանցքներում»



Երկիրը՝ առվորական մայդականց աչքերով

«Անալիտիկոն» հանդեսի նախորդ բոլոր համարներում փորձագիտական հայացքով էինք նայել նորանկախ երկրի, Դայաստանի, տարածաշրջանի և աշխարհի իրադարձություններին: Այս անգամ որոշեցինք մեր երկրին նայել նրա շարքային քաղաքացիների, ավելի ճիշտ՝ շարքային քաղաքացուիների աչքերով:

Ինչ խոսք, սա ռիսկային որոշում էր այն առումով, որ մեր հանդեսի ընթերցողները սովոր են փորձագիտական լուրջ վերլուծությունների: Սակայն հուսով ենք, որ նրանց համար հետաքրքիր կլինի նաև սովորական-մարդկային-առօրեական հայացքը երկրում առկա խնդիրներին:

Այո՛ հենց խնդիրներին: Ստեփանակերտի մամուլի ակումբի մի ծրագրի շրջանակներում քաղաքացիական լրագրության հիմունքներն ուսումնասիրող կանաց խմբի անդամներին առաջադրվել էր ուշադիր զննել շուրջբոլորը, վեր հանել և լուսաբանել մեր կյանքի խնդ-

րահարույց երևույթներ ու թեմաներ, արծարժել հանրային հնչողություն ունեցող հարցեր կամ կոնկրետ ճակատագրերի միջոցով դիտարկել հանրային նշանակություն ունեցող որևէ խնդիր:

«Անալիտիկոնի» ընթերցողների դատին ենք ներկայացնում նորաթուխ քաղաքացիական լրագրողների նյութերը: Ու հուսով ենք, որ մեր ընթերցողները խիստ չեն դատի, այլ կնկատեն քաղաքացիական դիրքորոշման դրսևորումները, ինչպես ասում են՝ ծեռքը կյանքի զարկերակին դնելու փորձն ու շրջապատն ավելի լավը տեսնելու անկեղծ մղումը:



#### Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր

Ստեփանակերտ-Երևան



BBC, NATALIA KHARLAMOVA

ՀԱՅՈՂՆՈՒՄ՝ թէ՞ հեռացնալ



## Գայանե ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Ով այսպիսի երեխայի ընդունի Իմ  
անունով՝ Ինձ է ընդունում»:

### Աստվածաշունչ

Առւտիզմն այն հիվանդությունն է, որի առաջացման պատճառներն անհայտ են: Այստեղ մեծ դերակատարություն ունեն թե՝ գենետիկան, թե՝ հղիության շրջանի խնդիրները և թե շատ այլ հանգամանքներ: Այդպիսի երեխաները խնդիրներ ունեն խոսքային հաղորդակցման, սոցիալական հարաբերությունների, խաղալու և զվարճանալու ունակությունների մեջ: Եվ հաճախ, երբ ծնողներն առաջին անգամ լսում են բժիշկներից, որ իրենց երեխան առւտիզմ ունի, դժվարանում են հավատալ:

Այդպես եղավ Անգելինայի հետ. «Երբ ինձ ասացին, որ երեխաս՝ Արտյոմը, առւտիզմ ունի, չհավատացի, ես սրբեսի մեջ էի, աշխարհը փուլ եկավ գլխիս, տառապանքս աննկարագրելի էր: Երկար ժամանակ պահանջվեց ինձնից, որ հաշտվեմ այդ նտքի հետ և սկսեմ աշխատել, օգնել երեխայիս քայլ առ քայլ շարժվել դեպի հիվանդության վերացունք»:

Սրանք այն զգացողություններն են, որոնք քաջածանոթ են այս խնդրին

առնչված մարդկանց: Ծնողի համար անասելի ցավ է, երբ տեսնում է, որ երեխան ինքնամփոփում է, դադարում շփվել իր նմանների հետ և խոսքի արտահայտումն աստիճանաբար նվազում է: Այդ իսկ պատճառով ամենակարևոր հանգամանքը, որն անհրաժեշտ է այդպիսի երեխայի համար՝ շփումն է, հսարակության մեջ ինտեգրվելը: Շփումը, սոցիումին ինտեգրվելու կարիքն օդուժը նման անհրաժեշտ են: Իսկ դրա համար ամենագլխավոր վայրը մանկապարտեզն է, դպրոցը: Ցավոք, մեր հսարակությունն այնքան էլ պատրաստ չէ այդպիսի երեխաներին ընդունելու, ներգրավելու իր մեջ:

Վերջերս տեղեկացա, որ արցախյան դպրոցներից մեկի տնօրենը հորդորում, նույնիսկ ստիպում էր առւտիզմով հիվանդ երեխայի ծնողին՝ նրան դպրոցից հանել և տնային ուսուցմանք սահմանափակվել: Բայց, ի վերջո, տնօրենը ծնողի համառությանը տեղի տվեց: Երեխան շարունակեց սովորել դպրոցում, շփվել իր հասակակիցների հետ: Թե ինչ է մտածել տիրահոչակ այս տնօրենը՝ դժվար է ասել, բայց գոնե այն, որ ժամանակին մտափոխվելը հենց նրա օգտին էր՝ փաստ է:

Առւտիզմ ունեցող երեխաները, ինչպես բոլոր երեխաները, իրավունք ունեն և կարող են սովորել հանրակրթական դպրոցներում: Նրանց կրթության համար անհրաժեշտ է բազմամասնագիտական թիմի և ընտանիքի համագործակցությունը: Նրանք նույնպես կարող են բոլորի նման հանրակրթական դպրոցում հաջողության հասնել, եթե նրանց կրթությունը կազմակերպվի անհատական ուսուցման պլանի համաձայն, որը կազմվում է երեխայի կարիքների և հնարավորությունների հիման վրա: Կրթությանը պետք է աջակցեն նաև լրա-



Զրուցակիցներիս մեջ է Ելինան, որի երեխան՝ Տիգրանը, ևս տառապում է այս հիվանդությամբ

ցուցիչ ծառայությունները, ինչպիսին են՝ հատուկ մանկավարժի, հոգեբանի և այլ մասնագետների հետ աշխատանքը: Մինչդեռ կարող ենք միանշանակ ասել, որ ներկայումս մեր հանրակրթական դպրոցները պատրաստ չեն կրթության մեջ ներգրավել նման երեխաների, փոխարենն ունենալու ենք այսպիսի դեպքեր, երբ խնդրում են երեխային դպրոցից հանել: Չկա երեխա, չկա խնդիր:

Սա այն իրավիճակն է, որի մեջ կարող է հայտնվել ցանկացած ընտանիք: Ինչքանո՞վ է հասարակությունը պատրաստ ընդունելու իրենից տարբերվողներին, ինչքանո՞վ է թույլ տալիս սահմանափակ կարողություններով երեխային ինտեգրվել, դառնալ հասարակության լիարժեք անդամ: Երբ այդպիսի երեխաները չեն ինտեգրվում կրթական ոլորտում, երբ հասարակությունը նրանց «դուրս է մղում» իր միջից, այդպիսի երեխաները դառնում են լքյալներ: Լքյալներ, իսկ հետո կորսվածներ: Ինչպե՞ս պետք է դպրոցն աշխատի այդպիսի երեխայի հետ, ուսուցիչներն արդյո՞ք պատրաստ են մնացած աշակերտների հետ միասին այդպիսի երեխայի ևս դասավանդել... Սրանք այնպիսի հարցեր են, որոնք պետք է լուծվեն և պետական մակարդակով, և հասարակությունում գործող բարոյական հիմունքներով:

Զրուցակիցներիս մեջ է Ելինան,

որի երեխան՝ Տիգրանը, ևս տառապում է այս հիվանդությամբ: Բայց ի տարբերություն շատերի՝ նրա դեպքն օրինակելի է: «Իմ երեխան ներկայում մեծ առաջընթաց ունի: Գլխավոր պատճառներից մեկն այն է, որ նա հայտնվել է ծիշտ շրջապատում: Մանկապարտեզը, որտեղ նա հաճախում է, այն միջավայրն է, որը պետք էր իմ երեխային: Թե՛ դաստիարակները, թե՛ երեխաները սիրով են վերաբերվել երեխայիս հետ, և դա նրան թևեր է տվել, և այժմ երեխան զգալի առաջընթաց ունի հիվանդության հաղթահարման մեջ», - անկեղծանում է Ելինան:

Այս կարևոր գործին է լծված մեր հանրապետությունում այդ ուղղությամբ գործող եզակի մի կառույց: Դա քերույն քոքսի անվան Վերականգնողական կենտրոնին կից գործող Խնամքի կենտրոնն է, որը նախատեսված է առտիզմով հիվանդ և մտավոր հետամնացություն ունեցող երեխաներին օգնելու համար:

«Կենտրոնն ունի այդպիսի երեխաներին օգնելու բարձրակարգ պայմաններ: Այստեղ աշխատում են բազմաթիվ մասնագետներ՝ հոգեբան, լոգոպեդ, տարբեր ուսուցիչներ, ովքեր պարբերաբար վերապատրաստումներ են անցնում արտասահմանյան մասնագետների մոտ, - տեղեկացնում է Կենտրոնի հոգեբան Արմինե Դանիելյանը: - Մենք փորձում ենք հնարավորինս օգնության ձեռք մեկնել այդ երեխաներին, այստեղ ամեն ինչ արվում է, որպեսզի հիվանդությունը ընկրկի, նրանք կարողանան շփվել, արտահայտվել: Ունենք մշակված մեթոդներ, որոնք տալիս են իրենց արդյունքները: Սա Հանրապետությունում գործող միակ այսպիսի կառույցն է, ինչն ավելի է մեծացնում պատասխանատվությունը, որպեսզի կարողանանք

մեր գործն արդյունավետորեն անել:  
Ծրագիրն այնպիսինն է, որ Երեխան  
այստեղ անցնում է չորս ամսվա ինտեն-  
սիվ բուժում, այնուհետև, ծնողի ցան-  
կության դեպքում, անցնում են ամբու-  
լատոր բուժում ևս: Բացի մասնագիտա-  
կան պատրաստվածությունից՝ այդպի-  
սի Երեխաներն ունեն սիրո և հոգատա-  
րության կարիք, ինչը, վստահ կարող եմ  
ասել, որ այստեղի Երեխաները ստա-  
նում են:

Անհնար է չհամաձայնել, որ սերն է  
միակ խթանը, որը կարող է առաջանալ  
հիվանդ Երեխային օգնել առաջ շարժ-

վել, բայց և դրա հետ մեկտեղ պետու-  
թյունն ու հասարակությունը պետք է  
անեն ամեն ինչ, որպեսզի հարգվեն և  
հաշվի առնվեն առաջիկմ ունեցող Երե-  
խաների իրավունքներն ու պահանջնե-  
րը:



«Մեր, ազատություն, արդարություն՝ երեք գլխավոր  
արժեքները...»



## Զուլիկետա ԱՌՈՒՍՏԱՍՅԱՆ

Հավանաբար, ձեզնից շատերը, ինչպես և ես, բազմիցս ականատես են եղել մի այնպիսի տեսարանի, թե ինչպես է երեխան փորձում պաշտպանել անարդարորեն նեղության մեջ հայտնված ընկերոջը, իսկ մեծահասակներն էլ համոզում են նրան չմիջամտել. «Մի միջամտիր, ուրիշի գործերին մի՛ խառնվիր, դա քեզ չի վերաբերում...»: Միգուցե և ձեզ վիճակվել է այդ երեխայի դերում հայտնվել: Իսկ միգուցե, ինչն ավելի վատ է, դուք հենց այն հեղինակավոր մեծահասակն եք, որն անբիշ հոգու տեր մանկանը խորհուրդ էր տալիս հրաժարվել արդարությունից, որը մարդկության գլխավոր արժեքներից է, և, փաստորեն, դավաճանել մերձավորին, իսկ իրականում՝ ինքն իրեն:

Հնարավոր չէ այս երևույթի նկատմամբ անտարբեր լինել և չհարցնել, թե ինչու է այդպես: Ինչո՞ւ մենք, որ արդարության ենք տենչում, հեշտությամբ հրաժարվում ենք պայքարից և բարյացակամ չենք իրենց և մեր իրավունքները պաշտպանելու քաջություն ունեցողների հանդեպ: Ավելի ուշ, բացահայտելով մեր երկրի դժվարին պատմությունը, ես սկսել եմ հասկանալ, թե ինչպես է այս մերժելի երևույթը հաստատվել և արմատավորվել մեր հասարակության մեջ: Իսկ ուսումնասիրելով իմ ընտանիքի պատմությունը՝ գիտակցել եմ, թե որտեղից է սերուն իմ մեջ այդքան ցավագնորեն դրսնորվող «արդարության զգացումը»:

Ես մեծանում էի բազմազավակ ընտանիքում. մեր մերձավոր ազգականներից երեքը ստալինյան բռնաճնշումների զոհեր էին: Դիշում են, որ մեր ընտանիքում Ստալինի անունը երկար տարիներ շշուկով էր արտասանվում: Տանը դրա մասին քիչ էին խոսում: Ծնողներս ջանում էին մեր մանկությունը երջանիկ և ապահով դարձնել: Ընդ որում՝ մեր ընտանիքում հացը միշտ արդար էր վաստակվում:

**Զարություն պապիկիս** տարան կուլակաթափության տարիներին, թեև հայրիկիս ընտանիքն ապրում էր գետնափոր տան մեջ և որևէ աչքի ընկնող ունեցվածք չուներ: Ախր, Շուշանիկ (Շաշա) տատիկը մեծ սիրուց դրդված փախել էր գյուղի ամենահարուստ տան բատրակի հետ, այսինքն՝ օժիտ չէր ստացել: Իրենց ընտանեկան կյանքը սկսվել էր պապիկի ընկերոջ նվիրած կարպետից, որն իրենց առաջին ամուսնական անկողինն էր: Պատմում էին, որ պապս խիզախ և արդար մարդ էր, որ հաճախ քաջություն ուներ պաշտպանելու անարդարության զոհ նեղալներին և անպաշտպաններին: Շատերը նրա օգնությանն էին դիմում, ոմանք էլ՝ վախենում նրանից: Նրանից վերջին նամակը ստացել ենք 1942-ին՝ Նովոռոսիյսկի մոտից: Նրա հետագա ճակատագրի և քաղման վայրի մասին մեզ ոչինչ հայտնի չէ:

**Հայրս՝ Գրիգորին,** շատ չարաճի ու համարձակ էր, բայց միաժամանակ աչքի էր ընկնում արտասանվոր դերասանական տաղանդով և շատ շնորհալի երաժիշտ էր: 1946 թվականին նա արժանացել է Մոսկվայում՝ համամիութենական ինքնազործունեության փառատոնում ելույթի: Բեմական կատարումից հետո նա վարագույիր հետևում ուրիշներին աննկատ լսել է գյուղսովետի ղեկավարների՝ իրեն վերաբերող գրույցը, թե Զարությունի որդին մեծացել է, և պետք է շտապ վերացնել նրան՝ նախքան այդ անվախ երիտասարդը հասցնի «պոկել» իրենց գլուխը՝ հոր մատնության վրեժը լուծելու համար:

Պետական իրահանգով Գրիգորիին հարկադրաբար ուղարկել են Բաքվի նավթահորերում աշխատելու: Ավելի ուշ, երբ դեռ նորապասակ էր, նրան գործուղել են Մինգեչառուրի ՀԵԿ-ի կառուցմանը մասնակցելու: Միայն ինը ամիս անց՝ 1950 թվականի օգոստոսին, մալարիայով մեկ ամիս հիվանդանոցում պառկելուց հետո, նա կարողացել է վերադառնալ հայրենի գյուղ՝ ընտանիքի մոտ: Սեպտեմբերին՝ կաթնաֆերմայից վերադառնալու ճանապարհին նրան ձերբակալել են:

Հայրս ձերբակալության «պատճառի» մասին իմացել է քենուց՝ Էսթերից, որին միևնույն հոդվածով են ձերբակալել՝ «Աշխատանքային օրերի նվազագույն քանակը չլրացնելու համար»: Գեղեցկուհի Էսթերը կոլտնտեսությունում երեք չի աշխատել՝ թույլ թռերի և քրոնիկական ռևմատիզմի պատճառով: Վերջին հինգ տարիներին առողջական խնդիրների բերմամբ նա անկողնային վիճակում էր: Բայց նա ուներ ոսկե բնավորություն և ձեռքեր, որի համար էլ նրա հետ ամուսնացել էր ամուսնալուծված համագյուղացին: Սկսուրն ամեն քայլափոխի անզգուշորեն գովում էր հարսին՝ համեմատելով նրան նախկինի հետ: Իսկ վերջինս գյուղխորհրդի նախագահի դուստրն էր: Եւ ահա Էսթերին աքսորեցին հղիության չորրորդ ամսում: Համագյուղացիներից ոչ ոք համարձակություն չունեցավ պաշտպանել անարդարորեն դատապարտվածներին:

Ապա սկսվել է ազատության և արդարության համար բազմամյա պայքարը: Վերևում ուղարկվող անվերջ նամակներն սկսվում էին միևնույն բառակապակցությամբ՝ «Հանուն խորհրդային օրենքի արդարության»...

Հայրս տառապում էր լնդախտով և ձեռք բերեց նաև նրան ցմահ չարչարած բրոնխիալ ասթմա: Իսկ մորաքույրս ծննդաբերությունից հետո հիվանդացել է թոքախտով: Առանց բուժվելու, լավ սնվելու

և բնականոն կենսապայմանների հիվանդությունը սաստկացել է: Ծանր հիվանդացած էսթերից խլել են իր նորածնին, որը մանկատանն անտեր մնալու պատճառով մահացել է հինգ ամսական հասակում:

Միայն 1954 թվականի սեպտեմբերին, Ստալինի մահվանից մեկ տարի անց, մերոնք կարողացան արդարացվել: Գրիգորին հասցրել է հայրենի գյուղ բերել մահմերձ քենուն, որը քիչ անց մահացավ տարաբախտ հարազատների ձեռքերում:

Այսպես խեղվել է միլիոնավոր մարդկանց ճակատագիրը: Չէ՞ որ երկար տարիներ հալածվում էին իշխանավորներին անհաճո և անխտիր բոլոր այն մարդիկ, որոնք գեթ նվազագույն չափով ունեին քննական մտածողություն և այլակարծության սերմեր: Միևնույն ժամանակ մատնությունը դարձել է բնակչության ստվար հատվածի կյանքի կանոնը: Շատերը վախից ահաբեկված ստիպված են եղել հրաժարվել իրենց ազգականներից: Ի՞նչ արժեքների մասին կարելի է խոսել: Ամբողջատիրական համակարգը խեղել ու այլասերել է ամեն ինչ: Սա սեփական ժողովորի նկատմամբ ահաբեկչություն էր, ըստ էության՝ պետական ահաբեկչություն: Ցավոք, ահաբեկչությունը, ձեռք բերելով ավելի մեղմ դրսեւումներ, Ստալինի մահից հետո ևս շարունակվել է. ամենաարժանավոր մարդիկ միշտ էլ գտնվել են հատուկ ծառայությունների «նշանառության» տակ:

Գրող Իգոր Գարինը «Հակաբնական ընտրություն» հոդվածում լավագույնս է ասել. «Երկրի լավագույն մարդկանց ոչնչացումը ԽՍՀՄ-ում ԶԿ-ՆԿՎԴ-ԿԲ դահիճները վերածել են արդյունաբերական գործընթացի. մարդասպանները ոչնչացրել են մտավորականության ողջ սերուցքը, մանրակրկիտ որոնում և ոչնչացնում էին խելքով և խղճով քիչ թե շատ աչքի ընկնող բոլոր մարդկանց, գլխատում էին անգամ հենց խորհրդային դեկավար կազմից շատերին: Ոճրագործությունների հա-

մար նրանք ստանում էին պարզեներ, պաշտոններ, պարզեավճարներ՝ երկիրը հեղելով լեռնակույտ դիակների արյամբ...»:

ԽՍՀՄ-ը փլուզվել է համարյա երեք տասնամյակ առաջ, բայց այն դեռ շարունակում է ապրել մեր մեջ: Ու թեև մեր երկիրն այժմ այլ անուն ունի՝ Խորհրդային Միության շրջանից ժառանգված որոշ բացասական երևույթներ դեռ չեն վերացել: Եթե մենք կամենում ենք ավելի լավ և ավելի արժանավոր ապրել, ապա պետք է գաղտնազերծենք այն սոսկալի տարիների արխիվները: Չէ՞ որ անթիվ ու անհամար մարդկանց մահվան ու ճակատագրե-

րի խեղման մեղավորներն իրենց արժանի պատիժը չեն կրել: Ավելին՝ մեր փողոցները ցայսօր նրանց անուններն են կրում, իսկ արյունաբու հանցագործություններով աչքի ընկած որոշ ճիվաղների հուշարձաններ ցայսօր կանգուն են: Սա անհանդուրժելի է: Սա աններելի է:

Չի կարելի շարունակաբար լրել բռնաճնշումների իրական չափերի մասին: Եվ բավական չէ սոսկ չոր թվեր իրապարակել: Պետք է պատմել յուրաքանչյուրի մասին՝ անվանապես: Դա անհրաժեշտ է ոչ միայն դաժան հալածանքի միջով տարիներ անցած զոհերի հարազատներին, այլև նրանց, ում հայրերն ու պապերը խեղում ու կործանում էին ճակատագրեր, արտոնությունների և առավելությունների դիմաց կատարում այլոց հանցավոր անմարդկային հրամանները:

Բոլորս պետք է ապաշխարենք, որպեսզի այս ամենն էլ երբեք չկրկնվի...



**Իրականությունը՝ թվերով և... ինչպես կա  
կամ՝ հաշմած արտոնություններ**



## Ելիզավետա Պողոսյան

2016 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում հաշվառված է 8 427 հաշմանդամ, որոնցից 375-ը մինչև 18 տարեկան երեխաներ են:

Առաջին կարգի հաշմանդամների՝ պետության կողմից նշանակված թոշակը 31 հազար դրամ է, երկրորդ կարգի հաշմանդամներինը՝ մինչև 29 հազար, երրորդ կարգի հաշմանդամներինը՝ 19 հազար դրամ :

Ըստ Արցախի աշխատանքի, սոցալական հարցերի և վերաբնակեցման նախարարության տեղեկատվության՝ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները դեղորայք ձեռք են բերում անվճար, իսկ 3 -րդ խմբի հաշմանդամները՝ 50% գեղչով, իրականացվում են անկողնային հիվանդների տնային այցեր և մի շաբթայլ ծրագրեր:

Որքանո՞վ են ձեռնարկված այս միջոցներն օգնում հաշմանդամներին՝ հաղթահարելու իրենց խնդիրներն ու սոցիալական հարցերը:

Առաջին կարգի հաշմանդամ Ռուզաննա Սարգսյանի մայր Լենա Սարգսյանի խոսքերով՝ Ռուզաննան ստանում է 30 հազար դրամ թոշակ, դեղորայքի կեսը սեփական միջոցներով են գնում, քանի որ սահմանված դեղերը քիչ քանակությամբ են տրվում: «Ամեն ամիս բժշկական կարինետներով պիտի անցնես, ստորագրել տաս փաստաթղթեր,

որպեսզի դեղերը ստանաս: Երբեմն չեմ ել գնում, իոգնել եմ արդեն», - պատմում է մայրը :

Դավաստիացնում է, որ ոչ մի բժիշկ էլ չի այցելում տուն, նույնիսկ տեղամասային բժիշկը չի ծանաչում իր դստերը:

Ինքն ամեն տարի նամակ է գրում, բայց՝ «ձայն բարբառո հանապատի»...

Այս օրինակը խոսում է ոչ միայն օրենքի անկատարության, այլև անգամ այդ, մեղմ ասած, ոչ կատարյալ օրենքի թերակատարման մասին:

Հաշմանդամները, թվում է, արտոնություններ ունեն, բայց իրականում դրանք էապես չեն փոխում նրանց սոցալական վիճակը, իսկ բյուրոկրատական քաշքանչություններն էլ տվյալ դեպքում



Առաջին կարգի հաշմանդամ Ռուզաննա Սարգսյանի մայր Լենա Սարգսյանի խոսքերով՝ Ռուզաննան ստանում է 30 հազար դրամ թոշակ

դրդում են, որ մարդիկ հրաժարվեն անգամ այդ անբավարար արտօնություններից:

Մի՞թե տեղյակ չեն այս մասին պատկան մարմինները: Իսկ կա՞ վերահսկող մարմին: Որևէ մեկը ստուգու՞մ է իրականացվող ծրագրերի արդյունավետությունը:

Ըստ իս, հաշմանդամություն ունեցող անձանց համար օրենքով սահմանված փոքրիշատե արտօնությունները ոչ լիովին են կիրառվում: Ավելիին հասնելու համար էլ պայքարել է պետք:

Բայց դեռ կա՞ ուժ այդ փխրուն մարմիններում: Կպայքարե՞ն իրենց իրա-

վունքների համար, թե՞ հուսահատ հետ կքաշվեն:

Թե՞ հանրությունը պիտի սատար կանգնի նրանց: Ու նրանց իրավունքներին:

Կա՞ն, արդյոք, այս հարցով զբաղվող հասարակական կազմակերպություններ:

Հարցեր, հարցեր...



ՖՈՏՈԼՈՒՐ

# ՔԱՆԱՃ գԵՂԵցկուհին



## Յասմիկ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«Այստեղ կերպասե փափուկ անկողնու մեջ պառկած էր արքայադրուստը»  
**Ը. Պերրո**  
«Քնած գեղեցկուհին»

Մենք գնում ենք Ստեփանակերտ-Ազգերան ճանապարհով: Բլուրների եւ ծառերի սովորական բնապատկերը ձախ կողմից ընդհատվում է երկնագույն մի շինությամբ: Այն ունի սովորական օդանավակայանի շենքի տեսք: Շինությունը վերակառուցվել է շահագործման է հանձնվել վեց տարի առաջ՝ 2011 թվականին: Այստեղ կարելի է տեսնել թռիչքուղին, մտնել սպասարակը եւ նստել բազմոցներին կամ շրջել թերմիսալով: Կան օդանավակայանի բնականոն աշխատանքն ապահովող բոլոր անհրաժեշտ սաքավորումները: Օդանավակայանը կարող է սպասարկել ժամում 100 հոգու:

Իհարկե, կա մի տարբերություն, որով այս օդանավակայանը տարբերվում է աշխարհի շատ այլ օդանավակայաններից. այստեղ չկան ուղեւորներ: Այստեղ չես տեսնի մարդկանց եռուզեռ, դիմավորողների ու ճանա-

պարհողների գրկախառնություններ, չես լսի պայուսակների անվակների չըխկչըխկոցը, փափուկ վայրեջքի կամ բարի գալստյան ողջույններ: Այս ամենի պատճառը քաղաքացիական օդանավերը խոցելու մասին հարեւան Աղբեջանից անընդհատ ինչող սպառնալիքներն են:

Բայց մերոնք չեին կոչվի համառ դարաբաղցի, եթե սպառնալիքների պատճառով հրաժարվեին թռչելուց:

Դարաբաղի հայերն աչքի են ընկնում յուրահատուկ համառությամբ: Այն այնքան բնութագրական է, որ նրանց, կներեք, ավանակի հետ են համեմատում: Այդպես ել ասում են՝ Եշ դարաբաղցի: Եւ բոլորին պարզ է դառնում, որ եթե դարաբաղցին մի բան որոշել կամ վճռել է, ապա նրան հնարավոր չէ հետ կանգնեցնել, ուստի եւ իանգարել չարժե: Իսկ եթե տեսնում ես, որ խմբվել են «դարաբաղցիներն համառ» մի քանի հոգի, ապա ավելի լավ է սուսուփուս մի կողմ քաշվել: Վրցախ մտնելուց ել՝ սահմանին, երեւի թե արժե օտարականներին հորդորել. «Ո՛վ այստեղ մտնող, մի կողմ դի՛ր համառ դարաբաղցուն փոխելու փորձերը»: Դե լավ, վերադառնաք մեր օդանավակայանին:

Այսպիսով, հարգելի ընթերցող, դուք արդեն իրազեկ եք դարաբաղցիների ազգային առանձնահատկությանը եւ պետք է հասկանաք, որ նրանք, ըստ իրենց բնության, հիմնովին չեին փակի օդանավակայանն ինչ-որ սպառնալիքների պատճառով:

Օդանավակայանն, իհարկե, գործում է: Յավաքարարներն ամեն օր ջանասիրությամբ մաքրում են տարածքը, հաշվապահները հաշվետվություններ են կազմում, տեխնիկական աշխատողները ստուգում եւ սարքում են այն

ամենը, ինչ պետք է ստուգել եւ սարբել, կապավորներն ու նավիգացիոն ոլորտի մյուս մասնագետները նույնպես իրենց աշխատանքն են կատարում:

Օդանավակայանն ընդունում է Ստեփանակերտ-Երեւան պարբերական չվերթներ կատարող ուղղաթիռներ, իսկ անգարում կանգնած է փոքր Երկտեղանող օդանավը, որով կարող է թռչել յուրաքանչյուր ցանկացող:

Այսպիսին է մեր ժողովուրդը. Երբեք չի հուսահատվում եւ հավատում է իր ազատ ապագային: Թերահավատներին պատմեմ մերօրյա մի նոր անեկդոտ.

**Ստեփանակերտ, 1817 թվական:**  
Կայարանում լսվում է. «Երեւան գնալու համար ձի: Ո՞ւմ է պետք ձի՝ Երեւան մեկնելու համար: Զի՞ մինչեւ Երեւան: Մոտեցե՛ք»:

**Ստեփանակերտ, 2017 թվական:**  
«Տաքսի մինչեւ Երեւան: Ո՞ւմ է պետք տաքսի: Մոտեցե՛ք»:

**Ստեփանակերտ, 3017 թվական:**  
«Ինքնաթի՛ռ՝ մինչեւ Երեւան : Ո՞ւմ է հարկավոր մինչեւ Երեւան ինքնաթիռ: Մոտեցե՛ք իմ ինքնաթիռին»:



photo: Hakob Poghosyan

Գյուղացին և հողը  
Ով է ում պատկանում



## Հարա ՍԵՎՈՒՄՅԱՆ

Վերնագիրը ծեզ ոչինչ չհիշեցրե՞ց:

Հողերի սեփականաշնորհման առաջին տարիներին մի սրախոսություն կար, ըստ որի՝ ոչ թե հողն են տվել գյուղացում, այլ գյուղացուն՝ հողին:

Նկատի էր առնվում այն, որ հող ստացած գյուղացին չէր կարողանում մշակել իրեն պատկանող հողը, միջոցներ ու հնարավորություններ չուներ, առավել ևս, որ շատ գյուղերում մնացել էին հիմնականում ծերերը, որոնք միջոցների բացակայությունից զատ նաև ֆիզիկապես ի վիճակի չին զբաղվելու հողագործությամբ: Դետեւանքը՝ անունը կա, անանում՝ չկա:

Սակայն ուզում եմ խնդիրը դիտարկել մեկ այլ տեսանկյունից՝ գյուղում գործազրկություն կա՞, թե՞ չկա:

Կառավարությունն ասում է՝ չկա: Չկա, որովհետև, ըստ նրա, հող ունեցող գյուղացուն չի կարելի գործազրկ անվանել: Չի կարելի, քանի որ գյուղացին կարող է մշակել հողը և բարիքներ արարել: Բարիքներ արարելն էլ շահավետ գործ է: Ու նա, ինչպես ասում են, կարող է իր տունը պահել:

Հնչում է գեղեցիկ ու ճշմարտանման: Իսկ եթե գյուղացին չի՝ կարողանում մշակել իր բաժին հողը: Ծերերին մի կողմ թողնենք: Զահելների խնդիրներն էլ քիչ չեն: Սերմացուն և վառելիքը՝ թանկ: Դրա հետ մեկտեղ՝ գյուղտեխնիկայի սուր կարիք: Վարկ վերցնելն էլ գյուղացու համար

անհամեմատ դժվար է, քան քաղաքաբնակի համար: Տարին էլ որ անբարենպաստ է լինում՝ ուղղակի մի իսկական մղավանջ...

Մեկ այլ խնդիր է գյուղատնտեսական մթերքների իրացումը: Պետությունը պետք է լրջորեն զբաղվի այս հարցով:

Դա վաղը: Իսկ այսօ՞ր:

Այսօր ի՞նչ անի խեղճ գյուղացին՝ համբերության չիբուխը ծխելուց զատ...

Նորից վերադառնանք խնդիրն՝ հիմնա գործազրկ է, թե՞ ոչ:

Կառավարությունն ասում է...

Ու խնդիրը մնում է:

Ու գնալով խորանում է քաղաքի և գյուղի միջև անդունդը: Որպես ելք գյուղացին հաճախ տեղափոխվում է քաղաք: Ու լքվում են գյուղերը:

Կառավարությունն ասում է...



Վասն հյուրանոցային բիզնես...



## Նարինե Աղալզաս

Հյուրանոցային բիզնեսը բավականին տարածված ձեռներեցական գործունեություն է, որի նպատակը, բնականաբար, շահույթ ստանալն է: Որպեսզի ձեռներեցության այս տեսակն իրապես հաջողակ ու շահութաբեր լինի՝ հարկ է էն գլխից ճիշտ որոշումներ ընդունել և ճիշտ քայլեր անել դրա զարգացման համար: Եւ ինչու չէ՝ փորձել համապատասխանելու միջազգային չափանիշներին: Դասկանում ենք՝ դա այնքան էլ հեշտ չէ: Բայց, դե, անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների պարագայում ինարավոր է:

Արցախում հյուրանոցային բիզնեսը, մեղմ ասած, այնքան էլ չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին: Խնդիրներն առավելս սուր երևակում են ծառայությունների ոլորտում: Շատերը կարծում են, որ մատուցող կամ սպասուիկ աշխատելն ամոր է, դրա համար էլ գործատուններն առանձնապես մեծ ընտրություն չունեն: Արդյունքում՝ հյուրանոցային բիզնեսում ներգրավված աշխատակիցների 90 տոկոսն օտար լեզուներ չգիտի, բայց այդպիսիներին, այնուամենայնիվ, գործի են ընդունում, մտածելով՝ ոչինչ, կսովորի...

Մեկ այլ խնդիր է գին-որակ համապատասխանության բացակայությունը: Ինքս երկու տարի աղմինհստրատոր եմ աշխատել մայրաքաղաք Ստեփանակերտի լավագույն հյուրանոցներից մե-

կում: Ու մի զավեշտալի միջադեպ են մշտապես հիշում: Էն գլխից հյուրանոցում մարզասրահ կար, որը, սակայն, մի քանի տարի առաջ փակել էին: Դրա տեղը բացել էին ազգային խոհանոցով ռեստորան: Բայց ահա պաշտոնական կայքում և գովազդային թերթիկներում այդ փոփոխության մասին ոչինչ չեն գրել: Ցայսօր: Աշխատակիցներին էլ զգուշացրել էին՝ մարզասրահի մասին հարցուփորձ անելու դեպքում ասեք, որ, իբր, նորոգվում է...

Ու ահա օրերից մի օր մեր հյուրերից մեկը՝ մի երիտասարդ, ինձ հարցրեց մարզասրահի մասին: Եւ ես խսկույն ևեր պատասխանեցի արդեն իսկ սերտած պատասխանով՝ նորոգվում է: Ու կարող եք պատկերացնել, թե ինչքան անհարմար զգացի ինձ, երբ երիտասարդը տարակուսած ասաց. «Ուղիղ մի տարի առաջ դարձյալ կանգ էի առել ձեր հյուրանոցում և այն ժամանակ էլ էին ասել, որ նորոգվում է: Վերջ չունի՞ ձեր նորոգումը, թե՞ ամեն տարի նորոգում եք»: Ամորից ուզում էի գետինը մտնել: Այս միջադեպը կարող էր ավելի սուր իրավիճակի հանգեցնել, սակայն բախտի բերմամբ մեր հյուրը բարեսիրտ էր և ավելի հեռում չգնաց՝ չբողոքեց:

Տարեցտարի աճում է մեր երկիր այցելող զբոսաշրջիկների թիվը, սակայն զբոսաշրջային սեզոնը մեզ մոտ բավականին կարծ է, և հյուրերը զբաղվելու շատ բան չունեն՝ ավանդական տեղեր ու եկեղեցիներ այցելելուց զատ: Զբոսաշրջիկները հիմնականում 2-3 օրից ավել չեն մնում մեզ մոտ: Իսկ ձմռանն առավել ևս քիչ զբաղմունք կա, ժամանցի վայրերն էլ սահմանափակ են

Միգուցե փորձե՞նք ընթանալ ժամանակին համաքայլ ու զարգացնենք մեր հյուրանոցային ոլորտը: Թե օգտակար կլինի և թե շահավետ:



ԱՅԵԼԱՇԵՍԻ իրավիճակներ չկան  
Կամ՝ նորաձեռնությունը միջազգային ճանաչում չի պահանջում



## Քրիստինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Շատերի կարծիքով՝ Արցախն աշխարհի կողմից դժվար ու դանդաղ է ընկալվում: Շարունակվում է մնալ մեկուսացված կամ Հայաստանի ստվերի տակ:

Սակայն, Արցախի հայուհիները, հատկապես՝ երիտասարդ աղջիկները, համամիտ չեն այդ կարծիքի հետ: Ավելին, նրանք չեն գգում այդ մեկուսացումը:

Դրան ինքներդ կարող եք ականատես լինել երեկոյան ժամերին Ստեփանակերտ քաղաքի Վ. Սարգսյան - Ազատամարտիկների փողոցներով քայլելիս:

18:00-ից հետո քաղաքի կենտրոնական փողոցները վերածվում են նորաձևության հարթակի:

Յիանալ կարելի է Արցախի երիտասարդ աղջիկների ճաշակով: Թե ինչպես են նրանք կրում մոդելավորողների հագուստներ, ունենում իդեալական տեսք... աշխատանքային օրվանից հետո:

Կիարցնեք՝ բա մեկուսացու՞նը, միջազգային ճանաչման բացակայությունը, աշխարհի հետ հաղորդակցվելու սահմանափակ հնարավորությունը...

Մի շտապեք՝ գտնվել է կախարդական փայտիկը:

Յիմնական պատճառն, անշուշտ, համացանցն է:

Արցախի երիտասարդներից յուրաքանչյուր երրորդը Instagram-ի, Facebook-ի օգտատեր է: Պարզ է դառնում, թե ինչպես կարելի է սովորել նրբագեղ ու շքեղ հագնվել՝ երբեկցե արտասահմանում չլինելով ու չնասնակցելով նորաձևության շաբաթներին Միլանում, Նյու Յորքում, Բեռլինում, Լոնդոնում, Փա-

րիզում կամ այլուր:

Այլ հարց է, թե ինչպես ձեռք բերել նմանատիպ հագուստներ, զարդեր, դիմահարդարման պարագաներ՝ բնակվելով Արցախում:

Ընդգծված նորառն հագնված մի քանի աղջիկներից տեղեկացա, որ վերջին մի տարվա ընթացքում շատ ավելի մատչելի է դարձել հագուստներ ընտրելն ու պատվիրելը: Կապի միջոցներն ել գնալով կատարելագործվում են:

Դեռևս մի տարի առաջ աղջիկներն իրենց հավանած հագուստի համար ստիլիզած էին լինում մեկնել Երևան ու մի քանի օր շրջել խանութներով...

Սակայն, Ստեփանակերտում Գլոբբինգի հայտնվելուց հետո ամեն ինչ շատ ավելի դյուրին է դարձել: Գլոբբինգն օգնում է գնումներ կատարել ողջ աշխարհում: Սա հարթակ է, որը համագործակցում է հայտնի օնլայն խանութների, կայքերի հետ:

Իհարկե, աղջիկները նման հնարավորությունը բաց չեն թողնում և պատվիրուն են թե կոսմետիկա, թե հագուստներ և այլ անհրաժեշտ իրեր, ասենք, բրիտանական հայտնի բրենդային խանութներից:

Միգուցե այս հանգամանքը խանգարում է տեղի փոքր բիզնեսին, սակայն կանակ դրական ազդեցություն. բնակչությունն այլևս ստիլիզած չէ համակերպվել թուրքական ապրանքներին և սահմանափակել իր ընտրությունը:

Ինչպես ասում են՝ անելանելի իրավիճակներ չկան: Իսկ նորաձև հագնվելու համար էլ միջազգային ճանաչման կարիք չկա:



photo: Kristine Aguilaryan

Փախստականներ. Երեկ, այսօր և վառը



## Ռուզաննա ԱՎԱԳՅԱՆ

Նախնիների հայրենիք՝ Լեռնային Ղարաբաղ, նրանք վերադարձել են 1988 թվականին՝ նույն տարվա փետրվարին տեղի ունեցած սումգայիթյան իրադարձություններից հետո։ Պարտադրված տեղափոխությունը շարունակվել է նաև 1990 թվականին՝ Բաքվում ծավալված հունվարյան իրադարձություններից հետևանքով։ Բայց Արցախ վերադարձած առաջին ծիծեռնակները Սումգայիթի հայ փախստականներն էին։ Այդ ժամանակ դեռ ինքնավարության կարգավիճակ ունեցող Լեռնային Ղարաբաղը փախստականներին ըստ ամենայնի ապահովում էր աշխատանքով և բնակարանով (հանրակացարաններում, հիմնարկներում, հյուրանոցներում և այլուր)։

Փախստականների երկրորդ ալիքը ժամանել է արդեն շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղ, որի ճանապարհներն ու բնակավայրերը գնդակոծվում և հրթիռակոծվում էին բոլոր կողմերից։ Աղրբեջանից շուրջ 30 հազար հայ է ապաստանել Լեռնային Ղարաբաղում՝ Բաքվի վարած խտրական քաղաքականության և ազգային պատկանելության հիման վրա մոլեգնած հալածանքներից հետևանքով։

Աղրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև պատերազմը տևեց չորս տարի...»

Ակտիվ ռազմագործողություններից անցել է 25 տարի, բայց փախստականների հարցն արդիական է նաև այսօր։ Այսպես, Լեռնային Ղարաբաղը ցայսօր ճանաչված չէ, իսկ երկրի հշիսանություններն ել պատերազմից և ավերածություններից հետո ի վիճակի չեն փախստականներին լիարժեք օգնություն ցուցաբերել։

Պատերազմից հետո փախստականներից շատերը լեզվական պատճեշի պատճառով չեն կարողացել ինտեգրվել տեղի հանրությանը և ստիպված են եղել հեռանալ Ղարաբաղից։ Յեռանալու ծանրակշիռ պատճառներից էր նաև բնակարանների բացակայությունը։ Փախստականներից շատերն են մասնակցել արցախյան պատերազմին, զոհվել հայրենիքի համար մղված պաշտպանական մարտերում։

Ղարաբաղում բնակվող և միջազգային կարգավիճակ չունեցող փախստականները ստիպված են ինքնուրույնաբար լուծել իրենց առջև ծառացած խնդիրները։

Լեռնային Ղարաբաղի կառավարությունն ինչ-որ չափով փորձում է օգնել նրանց, բայց տրվող աջակցությունը շատ փոքր է այդպիսի մեծածավալ խնդիրներ լուծելու համար։ Ներկա դրությամբ շուրջ 450 ընտանիքներ բնակարանի կարիք ունեն, բայց դեռ պարզ չէ, թե նրանց հերթը երբ է հասնելու։ Յիշորեթային վարկավորման սոցիալական հիմնադրամը նույնական չի թերևացնում փախստականների խնդիրները. բանկերն առևտրային կազմակերպություններ են և սահմանում են վարկավորման իրենց՝ ոչ միշտ հասանելի պայմանները։

Աղրբեջանական ԽՍՀ-ում իրենց տներն ու բարեկեցությունը կորցրած մարդիկ «յուրայինների մեջ օտար են դարձել»։ Ցանկության դեպքում Լեռնային Ղարաբաղում փուլային ճանապարհով վաղուց կարելի էր կարգավորել փախստականների բնակարանային խնդիրները։ Դրանից հետո կարելի էր առաջ ընթա-

նաև՝ կազմակերպելով ներկայումս Ռուսաստանում և այլուր բնակվող փախստականների հայրենադարձությունը դեպի Լեռնային Ղարաբաղ: Նրանցից շատերը կվերադառնային իրենց նախնիների հայրենիքը, եթե վստահ լինեին, որ կառավարությունը նրանց բախտի քմահաճույքին չի թողնի:

Ի տարբերություն մեծահասակների՝ փախստականների երեխաները, որոնք ծնողների հետ միասին մանկահասակ տարիքում ստիպված են եղել հեռանալ իրենց օջախներից, ինչպես նաև փախստականների՝ Լեռնային Ղարաբաղում ծնված երեխաները կարողացել են ինտեգրվել դարաբաղյան հասարակության մեջ: Յայոց լեզվի իմացությունը, դպրոցը, համալսարանը, աշխատանքն ու համակե-

ցությունը նրանց հաղորդել են դարաբաղյան հասարակության ինտեգրվելու հզոր խթան: Իմանալով օրենքներն ու լեզուն՝ երիտասարդ սերունդը դառնում է միջնորդ ավագ սերնդի և պետական պաշտոնյաների միջև:

Կցանկանայի, որ փախստականների նկատմամբ վերաբերմունքում շատ բան փոխվեր.

\* Երկրի լիիրավ քաղաքացի լինելու և աշխատանքի տեղափորկելու ցանկություն ունեցող փախստականների համար կազմակերպել հայոց լեզվի ուսուցման դասընթացներ,

\* Ստեղծել երկու պատերազմների միջով անցած և սթրեսից չձերբազատված փախստականների ավագ սերնդի համար հոգեբանական վերականգնման ծառայություն,

\* Յրավիրել միջազգային կազմակերպությունների ուշադրությունը փախստականների խնդիրներին,

\* Փախստականների համար տներ կառուցել ոչ միայն շրջկենտրոններում, այլև գյուղական բնակավայրերում:



photo: Amrap.am

Թոշակառուներն էլ են ուստի ուզում



## Այսնա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Ուզում եմ ձեզ ծանոթացնել 1942թ. ծնված ստեփանակերտցի Արփինե Կարապետյանի հետ:

Նա ստացել է միջին մասնագիտական կրթություն և որպես ապրանքագետ ուղարկվել է Բաքու՝ կոռապերատիվ խանութում ըստ մասնագիտության տեխնիկական աշխատանքներ կատարելու համար: 12 տարի աշխատելուց հետո ազգային խորականության պատճառով նա ստիպված է եղել գործից դուրս գալ՝ աղբբեջանցի տնօրենը նրան ազատեց գործից: Ի հեճուկս բոլոր ջանքերի՝ նրան չհաջողվեց հետ ստանալ իր աշխատանքային գրքույկը. արիսիվից փաստաթուղթ ստանալն ուղղակի անհնար էր, նրա գրավոր հարցումներն ել մերժվում էին:

1972 թ. նա մեկնեց Ռուսաստան՝ Սվերդլովսկ, որտեղ ավարտեց մեքենաշինության պետական համալսարանը՝ վարպետ-կռօւնկավար մասնագիտությամբ: Երկար տարիներ աշխատել է կաթսայամեխանիկական գործարանում՝ որպես կաթսայական կայանքների մեքենավար: Այնուհետև՝ Բելոյարսկի աստոմակայանում: Դրանք բոլորը քիմիական վնասակար արտադրություններ էին, որոնցում աշխատելու համար նա ոչ մի փոխհատուցում չի ստացել:

1992թ. Արփինե Կարապետյանը վերադարձավ հայրենի Ստեփանակերտ: “Պատերազմի և հետպատերազմյան տարիներին այստեղ շատ դժվար էր աշխատանք գտնել: Ի վերջո, նա գործի անցավ Շուշիի Մշակույթի տանը՝ որպես հավաքարար, բայց երկու տարի աշխատելուց հետո առողջական խնդիրների պատճառով գործից դուրս եկավ: Ունենալով 37-ամյա աշխատանքային ստաժ (Բաքվում աշխատանքի 12 տարիները հանած) այսօր նա ստանում է 39 հազար դրամ (մոտ 80 դոլար) թոշակ: Սոցիալական ապահովության գծով նրան՝ որպես միայնակ կնոջ, տրվում է 5 հազար դրամ (10 դոլար) հավելավճար:

Ի հեճուկս հազար ու մի ցավի և երկու միկրոինֆարկտների՝ նա հաշմանդամության իրավունքից չի օգտվում, ուստի՝ զրկված է նաև դեղորայքային աջակցությունից: Աչքերը վիրահատելուց հետո, լինելով 80 տոկոսով տեսողությունը կորցրած անձ, նա ստիպված է անձանք գնալ թոշակը ստանալու:

Արդյո՞ք կարելի է 44 հազար դրամով ապրել, եթե ամսական միայն դեղերի վրա ծախսվում է առնվազն 10 հազար, իսկ կոմունալ վճարների համար՝ ևս 15 հազար դրամ՝ չհաշված վերջին շոշանի գնաճը: 100-գրամանոց թթվասերն արժե 250 դրամ, ծերը՝ 650 դրամից սկսած, վերմիշելն ու ընդեղենը՝ 380-600 դրամ, իսկ տավարի միսը՝ 2500 դրամ:

Ճե՞յ, դուք՝ վերևուն...



photo: AGRU EUROPE

Պատերազմի և խաղաղության միջանցքներում



## Վարդիթեր ԱռՍասՅան

Նորանկախ Արցախում ռազմական դրություն է: Վաղուց: Պատերազմից ի վեր:

Պատերազմից 23 տարի է անցել, այդ ընթացքում իրավիճակը փոխվել է, բարելավվել է կյանքը, աստիճանաբար երկիրն անցնում է խաղաղ կենսակերպի, մեր քաղաքներում ու գյուղերում պատերազմը հիշեցնող քիչ բան է մնացել...

Բայց մնացել է կորստի ցավը: Սահմաններին դեռ 18 տարեկան երիտասարդներ են զոհվում: Ընդունված է ասել, որ մենք ապրում ենք «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում: Մի քիչ կխմբագրեի՝ ապրում ենք «Եվ պատերազմ, և խաղաղություն» իրավիճակում: Ասել է թե՝ և ուրախություն, և տիսրություն, և հրճվանք, և ցավ, և ավետիս, և գույժ, և կյանք, և մահ, և անդորր, և... Համար Մեկ:

Համար Մեկ (պատրաստության առաջին աստիճան, վտանգի առաջին աստիճան) ոչ միայն սահմաններին, այլև ամենուր, այդ թվում՝ մեր հոգիններում:

Այո, պատերազմից 23 տարի է անցել, բայց արտաքին սպառնալիքը դեռ մնում է, այն դամոկյան թրի պես շարունակում է կախված մնալ մեր գլխին: Դրա համար էլ ռազմական դրություն է: Դրա համար էլ մենք միշտ զգոն ենք, աչալուրջ և ամեն ինչի պատրաստ: Ու այս տիրույթում էլ պիտի գտնենք մեր անդորրն ու երջանկությունը: Մեր աչալուրջ, մեր վախվորած երջանկությունը: Մեր անհանգիստ հանգիստը:

Մենք ապրում ենք պատերազմի և խաղաղության միջանցքներում:

Ռազմական դրությունը նաև մեր հոգիններում է: Մի կողմից լավ է պատրաստ են ամեն ինչի, և քեզ դժվար է անակնկալի բե-

րելը: Մյուս կողմից ել վատ է՝ ամեն ինչ ընկալում ես գրեթե ռազմական տեսանկյունից: Այդ թվում՝ առօրյան:

Արցախի առաջին ղեկավարներից մեկն ասել է, որ ոչ միայն պատերազմն է մեր կենցաղը դարձել, այլև մեր կենցաղն է պատերազմ դարձել: Զեռք բերած ամեն ինչ հաղթանակ է ու ռազմավար՝ մեծ թե փոքր (աշխատանք, գումար, նպաստ): Կորցրած ամեն ինչ պարտություն է ու նահանջ (աշխատանք, գումար, նպաստ):

Ինչպես ասում են՝ կյանքը պայքար է: Մեր պարագայում՝ պատերազմ: Չէ՝ «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»: Ավելի ճիշտ՝ «Եւ պատերազմ, և խաղաղություն»:

Ինչպես հայտնի երգիչը կասեր՝ հենց այսպես էլ ապրում ենք:

Ու կապրենք՝ փուլը չէ:

Միայն թե 18 տարեկան երիտասարդների սրտները շարունակեն բարախել: Միայն թե լուրերի ժապավեններում չլինեն գույժեր:

Հենց այսպես էլ ապրում ենք՝ պատերազմի և խաղաղության միջանցքներում:

**P  
A**

PUBLIC  
AGENDA

YEREVAN



STEPANAKERT PRESS CLUB



National Endowment  
for Democracy

*Supporting freedom around the world*